1920 Թ. ՇՈՒՇՎԱ ՄԱՐՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍԻ «ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ»

Միրզա Տեր-Սարգսյանը ծնվել է Ղարաբաղի Վարանդա գավառի Փիրջամալ գյուղում, քահանայի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է հարևան Վաքազաքուն գյուղում, ապա ավարտել է Շուշվա թեմական դպրոցը: Մ. Տեր-Սարգսյանը եղել է ուսուցիչ, 1910-ականներից մինչև Շուշվա ավերումը՝ Ղարաբաղի հոգևոր առաջնորդարանի ատենադպիրը: Նրա գրական հակումները դրսևորվել են երիտասարդ տարիքում: Ժամանակի հայկական մամուլում լույս են տեսել Մ. Տեր-Սարգսյանի մի շարք պատմվածքները, գլխավորապես ղարաբաղյան թեմաներով: 1914 թ. Շուշում տպագրվել է նրա «Կաթիլներ» ժողովածուն:

1920 թ. մայիսի 15-ին Հադրութից Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին Ղարաբաղի կոնսիստորիայի անդամ Կարապետ քահ. Վարդապետյանցը և ատենադպիր Միրզա Տեր-Սարգսյանը նամակով հայտնում են Շուշվա մարտյան ողբերգության որոշ մանրամասներ. «Կոնսիստորիայի կողմից սպանված են՝ անդամ Խորեն ավ. քահ. Իսկանդարյանը, կարգապահ Անանիա Տեր-Դանիելյանը և դիվանապահ Հովհաննես Ղարաբեկյանը: Քահանաներից սպանված է Հարություն քահ. Վարդապետյանը, իսկ Գարեգին ա. քահ. Հովհաննիսյանը՝ ազատվել է բանտից կիսամեռ դրության մեջ և միանգամայն մերկ. սպանված են թեմ. դպրոցի տեսուչ Աղ. Ծաուրյանը, ուսուցիչ Գաբրիել Ղուլիքևխյանը, հոգաբարձու Անդրեաս բեկ Տեր-Հարությունյանը, Ղուկասյան ուսումնարանի տեսուչ բժ. Նիկողայոս Եարամիշյանը և այլն»: Նամակում հաղորդվում է նաև թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի եղերական սպանության մասին, որի գլուխը կտրել և պտտեցրել են քաղաքում՝ ի տես խուժանի:

Միրզա Տեր-Սարգսյանը եղել է մասնակիցն ու ականատեսը հայրենի երկրում տեղի ունեցող դեպքերին, նրա աչքի առաջ այրվել են Ղարաբաղի հայ գյուղերը և ավերվել ու հիմնահատակ կործանվել է Շուշին: Այդ բոլոր իրադարձությունների մասին է պատմում նրա «Հուշագրությունը», որը տակավին անտիպ է և որի «Բ» մասից երկու հատված՝ ներկայացնում ենք ստորև: Ձեռագիրը պահվում է Հայաստանի ազգային արխիվում:

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՑԱՆ

ՄԵՌՆՈՂ ՔԱՂԱՔԸ

Սուլթանովը վճռել էր, ինչ գնով էլ լինի, տիրել Ղարաբաղին: Ամենօրյա խրոնիկական դարձած ջարդերն ու խժդժությունները լցրել էին հայի համբերության բաժակը: Բայց և այնպես, նա որոշել էր նախահարձակ չլինել կռվի մեջ, այլ մնալ ինքնապաշտպանի դերում:

...Եվ սկսում է մի անպատմելի խուճապ, մի սոսկալի փախուստ, առանց սրի ու կրակի առաջ կանգ առնելու, քաջ իմանալով, որ մարդ իր գլխի տե-

---

* *Ակադ. Աշոտ Հովհաննիսյանի հայրը:*

** *Տպագրվում է որոշ կրճատումներով:*

ը չի կարող լինել և չի էլ մարդարեանալ կընկնի՞, թե կազատվի բախտի բերմունքով: Փախուստն սկսում է ամենից առաջ Քամու-Ջաղացից. հետո կազարմի տակից և ապա ներսի թաղերից: Առաջնորդարանի փողոցը, սկսած Անանիանց տներից մինչև Բախիշ-բեկ Ասրիբեկիանցի տունը, բռնված էր սպայական դպրոցի զինվորներով և սրի ու հրի էր մատնվում այդ հարուստ թաղը, այ՛ ու ձախ անխտիր: Այդտեղից շատ քիչ մարդ է կարողանում ազատվել: Ջեն խնայում նույնիսկ թեմական առաջնորդին, որ միշտ խաղաղություն էր քարոզում և շարունակ աշխատում համերաշխություն պահպանել երկու հարևան ժողովուրդների մեջ: Առաջնորդարան, թեմական դպրոց, կոնսիստորիա իրենց դիվանով, թանկարժեք կահկարասիքով, գործերով, ամբողջ Ղարարաղի հայության հարյուր տարվա արձանագրական մատյաններով ու անգնահատելի դոկումենտներով և հնություններով, տաճկահայ որբերի որբանոցն իր 120 որբերով, որոնք խնամվում էին Շուշում չորս տարուց ի վեր, կլուբ, բարեգործական ընկերություն իրենց գրադարաններով, պետական վարչություններ իրենց գործերով, դպրոցներ, եկեղեցիներ իրենց թանգարաններով և հարուստ զարդերով ամբողջովին կրակի են մատնում անտարակույս կողոպուտի ենթարկելուց հետո... Մենք բռնել էինք «փրկության ճանապարհը»: Բուլվարը մեզ չփրկեց և ոչ մեր տուն դառնալու հույսերն իրականացան: Օրվա «հերոսներից» մեկի կանչը, թե փախե՛ք ու ազատվեցե՛ք, քանի դեռ Քարինտակի քերծը մեր ձեռքին է և այդ է մեր միակ անցքը, մեզ ինքնամոռաց շտապանքով ձգեց քաղաքի խուլ-խուլ փողոցները, տների բակերն ու պարտեզները: Մեր առաջ, մեր ոտքերի տակ, մեզ հանդիպում էին ընկած դիակներ, կիսամեռ մարդիկ, գունաթափ կանայք ու երեխաներ, արյան մեջ թավալվողներ: Ընկնում էին շատերը մեր կողքին, մեր ձեռքերի վրա, մեր ոտների տակ, մեռած, վիրավոր, աղաչանքը բերաններին մի կում ջուր հայցելով, մի փրկություն աղերսելով... Մայրն ընկնում է աղջկա կողքին, աղջիկը կռանում է որ բարձրացնի, հանկարծ այն կողմից վրա է հասնում ասկյարը, վիրավոր մորը սվինով տապալում գետնին՝ շունչն ավելի շուտ փչելու համար ու աղջկան թևի տակն առած թուրք սպային ընծա տանում... Գեղեցկուհի մոր գրկին մանուկը վիրավորվում է, մայրը հանում է թաշկինակը, որ վերքը կապի, սպան մոտենում է, մանկանը մոր դրկից առնում դեն շպրտում իբրև մի ավելորդ և իրեն խանգարող բեռ և օրհասական կռվով, ճվոցով ու ծվոցով իր երեսը ծվատող մորը ներքև քաշ տալիս...

Ո՞վ էր նայողը: Թեկուզ բարեկամ, թեկուզ հարազատ ու աչքի ազիզ, ամեն մարդ իր գլուխն էր ազատում, ամեն մարդ իրեն փախցնում: Մայրն իր որդուն էր կորցնում, կինը հիվանդ ամուսնուն, որդին պառավ մորը, քույրը եղբորը: Եվ վազում էին անզգա, վայրենաբար, մեկը մյուսի ձեռքից բաց ընկած, մեկը մյուսին կորցրած, իսկ ով ավելի քաջ էր՝ իր երեխային գրկած, մեկին էլ ձեռքից բռնած:

Ո՞ւր էինք փախչում գլխապատառ: Առաջներս գնդակ, ետևներս կրակ, իսկ քաղաքի սպիտակ փողոցները կարմիր արյունով ներկված: Բայց ահա փրկության միակ հույսը: Ամպը պատում է քաղաքի շուրջը և թշնամու գնդակն այլևս մեզ չի բռնում, թեկուզ նա թափվում է կարկտի պես, թե-

կուզ մեկ-մեկ իր որսն է տանում: Ժողովուրդը ծովացել էր բուլվարի ուղղությամբ ե կուզեկուզ բարձրանում էր Քարինտակի քերծի գլուխը:

Այդտեղից ամպերի միջով հետ նայողի աչքին Ղարաբաղի փառք ու պարծանք Շուշին ե նրա սիրտը հրեղեն լեզուների մեջ դժդույն պատկեր էր ներկայացնում, աղոտ ու սև ծուխ ու մուխ, կարմիր բոցերով ներկված, իսկ գնդակների սուլոցն ու երբեմն լսվող պես-պես դժոխային ձայները ե թուրք խուժանի լիրբ բացականչությունները մեր ջղերն էին ցնցում:

Մեռնում էր քաղաքը: Մեռնում էր հոգեվարքի մեջ ջղաձգություններ անող հիվանդի նման: Բայց մենք լուռ էինք, սուգ ու աղաղակ չէինք բարձրացնում: Ո՞վ կհամարձակվեր ձայն հանելու...

Երեսներս շրջեցինք ու անցանք...

Ինչնում էինք, գրեթե սոթ էինք տալիս դեպի Քարինտակը իրար վրա թավված... Քերծը չի թողնում մեզ գնդակ բռնելու: Բայց հենց որ քիչ ցածանում էինք մեր պտույտը փոխում, դարձյալ գնդակը Ջտիր-տուզի գլխից սկսում է կատակներ անել մեզ հետ, դարձյալ մեր առաջ ընկնում են դիակներ: Էլի փառք ամպին, թե չէ մեզ բոլորիս գնդացիրներով կջնջեին:

Քարինտակը մի քիչ շունչ է տալիս մեզ: Ուրախանում ենք, որ կենդանի ենք: Մարդ կարողանում է խելքը գլուխը հավաքել և ականել յուրայիններին. որքա՜ն կորած ու հետ մնացած մարդիկ: Նոր են սկսում ախ ու վիշ, նոր կանչեր: Շատերը, գտնվում են, շատերը չէ, իսկ շատերը հիշում են, որ իրենց տան անդամների կեսը մնացել է քաղաքում: Անձնուրաց մարդիկ, սրտացավ մարդիկ, հետ են գնում, որ բերեն իրենց սիրելիներին և այլևս չեն վերադառնում: Կատաղի, հուսահատ դեմքեր են, որ հանդիպում են իրար, խելագար լեզուներ, որ չեն հասկանում իրար...

Նայում ենք մեկը դուրս է եկել առավոտյան ոտնամաններով, մեկն անգլխարկ, մեկն անկոշիկ, մեկն առանց վերարկուի, մեկն առանց հացի: Տասից մեկի ձեռքին հազիվ տեսնում ենք մի փոքրիկ կապոց, այն էլ՝ մեջը վոխնորդ կամ հաց, որ վերցրել էին այն ենթադրությամբ, թե մի քանի օրից հետո դարձյալ պիտի վերադառնան իրենց տները...

Միլիոնատերն իր ոսկու քսակը, իր թղթադրամի կապոցն էր թողել և առաջարկում էր ղարաբաղցի մշակին գնալ և բերել՝ կեսն իրեն տալու պայմանով, բայց մշակը պատասխանի փոխարեն միայն երես էր շրջում: Ո՞վ էր համարձակվել և իր գլխից ձեռք վեր առել ետ՝ դեպի կրակը գնալու:

Իսկ ավելի՜ սարսափելին: Վիրավոր մոր կրծքի վրա ընկած մանուկը մոր ծիծն է ծծում, իսկ մայրն անզգա, վերջին շնչում... Մի 12 տարեկան երեխա պատմում է, որ իրենց տան հինգ հոգուն իր աչքի առաջ մորթեցին և ինքը միայն պահարանի տակ թաքնվելով, կարողացավ ազատվել... Մի մայր կամենում է պատմել... բայց ուշագնաց ընկնում է և պատմությունը մնում է անհայտ...

Ա՜հ... բավական է... Վերջ չունեին տեսարաններն ու պատմությունները:

Ու փախուստն այսպես շարունակվում է դեպի Վարանդայի խորքը: Ամենքը գժվածի պես, ամենքը ցնցվածի պես...

(1920, ապրիլ)

ԼԱՑՈՂ ԱՎԵՐԱԿՆԵՐ

Ուխտել էի գեթ մի անգամ տեսնել Շուշու ավերակները, բայց վախում էի վրաս վատ ազդեն և ես ջղայնությունից խելագարվեմ: Ինձ տրամադրեց անպատճառ կատարելու այդ ճանապարհորդությունն իմ կինը, խոստանալով ինքը ևս ընկերանալ ինձ հետ:

Մենք գյուղից ճանապարհ ընկանք առավոտյան դեռ լույսը չբացված, տեղ-տեղ կորցնելով մեր ճանապարհը, ընկնելով ծմակների մեջ և փոխնե-փոխ շալակելով մեր հացի պարկը՝ պատմական կտավե խուրջինը և երեկոյան հասանք Դովթալաբի տակը:

Մեզ բռնեց մի սաստիկ անձրև, մտանք մի տերևախիտ ծառի տակ, բայց նա շատ քիչ պաշտպանեց մեզ փառավորապես թրջվելուց:

Քաղաքի շուրջը բարձրացել էր մի սաստիկ գարշահոտություն և յուրաքանչյուր քայլափոխում սատկած ձիանց լեշերը հարկադրում էին մեզ քիթ բռնած բարձրանալ Դովթալաբի վերելքը և հասնել մինչև հանգստարանի խորքը: Զորքի ձիանքն էին. կոտորվում էին «խնամքով» պահվելուց:

Զկար նախկին եռուզեռը քաղաքի շուրջը. ո՛չ դրսից մտնող կար և ո՛չ ներսից դուրս եկող: Կարծես ամայություն էր տիրում ամեն կողմ:

Մտանք քաղաք: Դեռ օր կար, բայց խանութները փակ էին: Խորհրդային Ադրբեջանը Ղուրբան-Բայրամի տոնն էր կատարում. երաժշտությունը նվագելով հասել էր ռուսաց եկեղեցու կողքին գտնվող բուլվարը և բավականին ամբոխ հավաքել իր շուրջը թուրք ամբոխ:

Երկու ծանոթ հայ պատահեցին մեզ, որոնք կարծես նմուշի համար էին մնացել քաղաքում, և մեր հարցուփորձին, թե ո՞րտեղ կարելի է իջևանել՝ առաջնորդեցին մեզ դեպի ռուսաց եկեղեցին, հայտնելով որ այդտեղ են իջևանում առհասարակ ճանապարհորդ հայերը, այդտեղ է նշանակված նրանց համար:

Մտանք եկեղեցի: Ի՞նչ եկեղեցի, շուրջն ապականություն, աղբանոց, ներսը մի ժխոր խեղդված օդի և գարշահոտության բոլոր «համեմներով»: Քանի՜ ձայն: Երկաթուղու կայարանի համշարիների բաժանմունքը դրախտ էր դրա մոտ, այն զանազանությամբ միայն, որ այդտեղ կային և՛ ինտելիգենտ ընտանիքներ, և՛ տականքներ՝ ասենք պրոլետարներ, որը Բաքվից էր գալիս և գյուղ պետք է գնար, մանավանդ Զանգեզուր, որը գյուղից և Բաքու պիտի գնար, բացառապես շուշեցի գաղթական: Վերջիններս սպասում էին հերթի ամեն օր հարյուրներով. քաղցա՜ծ, անո՜թի, մինչև որ ֆուրգոն կպատահեր ճանապարհվելու: Կառավարությունն էր ճանապարհ դնողը...

Այսպես, Բաքվից գալիս էին գյուղ, ասելով որ այնտեղ ապրելու հնարավորություն չկա, ինչ որ ունենք չունենք՝ բոլորը ձեռքներից խլել են բոլշևիկները, և գյուղից գնում էին Բաքու, ասելով՝ գյուղում ապրելու միջոց չկա, էլի այնտեղ մշակություն կանենք ու գլուխներս կպահենք:

Ո՞վ էր հասկանում իր արածը...

Ծանոթ ընտանիքներ շատ կային այդտեղ, որոնց մարդ դժվար էր ճանաչում, այնքան էին փոխվել նրանք, գունատվել, նիհարել, ցնցոտիացել: Իրար տեսնելուց նրանք լցվում էին հուզմունքով, խեղդվում, աչքերը, ջրակալում և երկար չէին կարողանում իրար հետ մի խոսք խոսել: Մենք տեղավորվեցինք մի անկյունում, մի ծանոթի մոտ, որի առաջին և բարեկամական նախազգուշացումն էր զգուշանալ գողերից և միջատներից, երկուսն էլ անխուսափելի պատուհաս, երկուսն էլ անրաժան այդտեղից: Մեկը մարդկային կամքից կախված, մեկն անկախ: Ո՞վ էր քննողը: Եթե անձրևը չլիներ մենք կլուսացնեինք դուրսը, բաց աչքով, ոտի վրա: Ստիպված եղանք անձրևի պատճառով կուչ գալ ներսը, մեզ բաժին ընկած մի անկյունում, մեր ցեխոտ ու լփլփան շորերի մեջ, մինչև մեր ոսկորները թրջված, և այդպես մնալ անշարժ:

Ես այդ դրության մեջ զառանցոտ երևակայությամբ մեր տան փլատակները փորփրելու ծրագիրն էի կազմում, որպեսզի նրանց մեջ իմ կորած «հարստությունը» գտնեմ հետևյալ առավոտ: Եվ այդ երևակայական հույսերով էլ նիրհեցի: Զնայելով որ հագիս շորերը թրջվելուց մսիցս էին կպել, բայց և այնպես հոգնած ջղերս ու տանջված մարմինս շուտով քուն բերին իմ աչքերին:

Երա՞զ էր, թե տեսիլ, որի մեջ զառանցում էի իմ տաքությունից՝ չգիտեմ: Մեր գրականագետ Լեոն էր ինձ դեմ հանդիման եկել այդտեղ, այս երազում, իր Հայոց պատմության ձեռագիր հատորները շալակած ու գնում էր տրտնջալով. «Ի՞նչ անեմ իմ բազում տարիների քրտնաթոր աշխատությամբ կազմած այս հատորները, ինչի՞ են սրանք պետք այսուհետև, երբ այլևս չկա Հայաստան»:

— Ինչպե՞ս թե Հայաստան չկա,— հարցրի ես վշտացած,— միթե՞ կոտորածը, տարադրությունը, հալածանքը նշանակում են, թե այլևս Հայաստան չպիտի լինի: Վշտացա՛ծ ես, ճի՛շտ է, բայց ես ավելի քան հավատացած եմ, որ Հայաստան պիտի լինի ու լինի...

Մենք այսպես խոսելով գնում էինք ինքնաբերաբար դեպի Ղազանչեցոց եկեղեցի և մտանք նրա բակը: Այդտեղ, եկեղեցու գավթում, իր գերեզմանից ելած կանգնած էր Անդրեաս եպիսկոպոսը, սպիտակ ձյունի պես զգեստում և «Հոգոց» էր մրմնջում Շուշու փողոցներում ընկած վեց հազար նահատակների վրա: Մենք անխոս անցանք նրա կողքով ու մտանք եկեղեցի: Խանձված էին եկեղեցու պատերը, մերկ, տխուր, սգավոր... Լեոն իր ձեռագիրները թափեց եկեղեցու խորանի առաջ և յուրահատուկ, բայց դառն մի ծիծաղ արձակեց, ավելացնելով. «Գուցե եկեղեցին պահե սրանց մինչև անցնեն այս բոլոր սասանությունները»: Հետո նա թևիցս բռնած բարձրացրեց մի բլրակ: Բլրակից մենք բարձրացանք ավելի վեր, մագլցելով մի մեծ լեռն ի վեր և մեր առաջ բացվեց Մասիսի գագաթը: Այդտեղից ձյան շերտերից մեկի վրա ժողով էր հայ գործիչների և գրողների և նրանց ուրվականները վիճում էին իրար հետ հոգևոր Հայաստանի մասին: Մենք այդտեղ տեսանք Խաչատուր Աբովյանին, Ներսես Աշտարակեցուն, Գրիգոր Արծրունուն, Ռաֆֆուն, Աղայանին և ուրիշ շատ հայրենասերների: Տեսանք սասանելիս Խրիմյան Հայրիկի ոգին Վանից Վարագ և Վարադից

Մուշ, որ երբեմն արծվի աչքերը չռած դեպի Հայաստանի ավերակները և ձեռքին մի կոտրած չերեփ բռնած կանչում էր բարձրաձայն.

— Գնում եմ համաշխարհային հարիսայի կաթսայեն ձեզի բաժին բերելու, ո՛վ իմ անբախտ զավակներ, արիացե՛ք, հոգի ու շունչ առեք և ոտքի ելեք...

— Այդ ո՞ր ժամանակից եք խոսում, Հայրիկ, անցան այդ տարիները, հարիսայի տարիները, այժմ հարիսայի տեղ տանկան է գործում, իր աշխարհավեր ռումբերով, և չերեփի տեղ սուրը, որինը հատու է՝ նրա էլ գործն աջող է ...

Խրիմյան Հայրիկն անցավ մրմունջը բերանին ու էլ ի՞նչ էր ասում՝ մենք չլսեցինք: Իսկ Մասիսի գագաթի ժողովակները մեզ տեսնելով պահ մի լռեցին և նախատինքի տարափը շրթունքներին՝ առաջինը Աշտարակեցին էր, որ հարցրեց.

— Ինչի՞ եք եկել:

— Աղացող ավերակների լուրն ենք բերել՝ ասացինք...

— Ա՛խ, ինչ հիմք էի դրել Հայաստանի վերածնության համար և ինչ եմ տեսնում այսօր, հարյուր տարուց հետո: Այդ ի՞նչ սգացող ավերակներ են, ի՞նչ մոխրակույտեր, ի՞նչ դիակներ: Խոհեմություն չունեցա՞ն մեր հետնորդներն իրենց գոյությունը պահպանելու...

Ապա առաջ եկավ Խաչատուր Աբովյանը և արտասուքն աչքերին ասաց. «Երանի՜ ձեռքս կոտրվեր և ես «Վերք Հայաստանի» չգրեի: Ո՞վ գիտե, եթե ես հայրենասիրության ու վրեժխնդրության կայծ չվառեի հայի սրտում, գուցե նա ուրիշ ավելի փրկարար միջոց գտներ իր գոյությունը պահպանելու համար: Երանի՜ չգրեի, երանի՜ չգրեի...»:

Գրիգոր Արծրունին աչքերն արնակալած, խրոխտ ձայնով հարձակվեց Լեոյի վրա և գոռաց.

— Ես ձեզ այդպես եմ ուսուցել: Ափսո՜ս իմ քսանհինգ տարվա քարոզներ. պատրաստվում էինք խոհեմաբար, կործանվեցինք անխոհեմաբար...

Ռաֆֆին կանգնեց տեղից և աչքերը գետնին ձգած սառնարյուն կերպով առարկեց նրանց.

— Ես տեսա իմ «Ձայն տուր, ո՛վ ծովակի» մարգարեությունը կատարված ե. Մասիսի գլխին հայկական դրոշակը պարզած. բայց դրանով կատարյալ չէ իմ մխիթարությունը, երբ «Խենթի» երազն ապարդյուն է անցնում և դրախտ-Հայաստանի փոխարեն նրա ավերակներն են աչքիս առաջ: Ո՞վ գիտե, գուցե դրանք նույն ավերակներն են, ինչ որ ես տեսա իմ «Խենթում» և հարություն պիտի առնեն նահատակների փոշուց նոր վերածնված որդիներ և բողբոջը դառնան նոր բուրաստանի... Ես չեմ վհատվում, որ այդպես պետք է լինի, որ պիտի վերածնվի Նոր-Հայաստանը և պիտի կատարվի իմ «Խենթի» երազը: Եվ այն ժամանակ... և այն ժամանակ իմ ոսկորները կհանգստանան չիրմիս մեջ...:

Ռաֆֆուն ծափահարեց Աղայանցը և ավելացրեց. «Եթե երկու և կես հայ էլ մնա աշխարհիս կեսին՝ դարձյալ ես իմ հույսը չեմ կորցնիլ: Հայը այն ցեղն է, որ աշխարհի սկզբից մինչև այսօր անցնելով հուրը և ջուրը, կրելով շատ տառապանքներ՝ հասել է մեզ, և երբ այդպես է՝ իմացեք որ նա պիտի ապրի և պիտի ապրի հավիտյան...»:

Աղայանցի ճառի վրա Ռաֆֆու դեմքը շառագունեց, իսկ մյուսները անտարբեր և սառն արտահայտություն միայն ցույց տվին:

Այնուհետև սպիտակ նժույգի վրա տեսանք մեզ սլացավ Խրիմյան Հայրիկի ուրվականը և մի նոր «Հայգույժ» կարդաց իր հորինած. «Թե հրե՛ն կոտորում են, դարձյալ կոտորում հայերին՝ Ղարաբաղից սկսած մինչև Նախիջևան և Գողթանից Շիրակ, Ղարս, Իգդիր ... կոտորում են՝ մանավանդ հայը հային: Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, երբ օտարը չէ մեզ կոտորում, այլ մենք: Ու երբ մենք ենք իրար կոտորում՝ կարող ենք բնաջնջվել... երթամ Լոնդոն, Փարիզ, տեսնեմ կարող եմ պուտ մը ջուր բերել այս կրակը հանգցնելու համար...»:

Խրիմյանի նոր «Հայգույժը» ջուր մաղեց ժողովականների գլխին և ամեն մի տեղից ձայն տվին. «Պետք է փոխել այդ քաղաքականությունը, զենքի քաղաքականությունը... Հերիք Լոնդոն, Փարիզ... Պետք է փոխել...» կրկնեցին ամենքը և հանկարծ աներևույթացան մեր աչքից: Ես և Լեոն մնացինք մենակ Մասիսի գագաթին:

Մեկ էլ տեսա իջնում ենք լեռան ստորոտը, հանկարծ կայծակի մի ահեղ որոտ ցնցեց ինձ, ես սարսափահար վեր թռա և տեսա, որ իսկապես որոտում էր, անձրևում, կայծակներ արձակում և նրա շանթերն արագ-արագ լուսավորում էին եկեղեցու ներսը ու անկարգ թափթփված ժողովուրդի տեսարանը ցուցահանում: Գլուխս ծանրացել էր տոթից ու հոտից: Ես բարձրացա տեղիցս և իմ կողքի լուսամուտը բաց տրի դեմքիս մի քիչ զովություն բերելու համար:

Իմ երազը կարծես ինձ ոչ զբաղեցնում էր և ոչ զարմացնում, այնքան էի հոգնած ու թմրած: Ես հորանջում էի, շարունակ շփում աչքերս, երեսս: Հանկարծ եկեղեցու շեմքում մի աղմուկ բարձրացավ՝ տարա՜ն, տարա՜ն գոչելով... Մեկը ձեռքն էր առել մի ուրիշի կապոց և քաշ էր տալիս: Հասան, գլուխը ծեծեցին ու ձեռքից առան:

Անձրևը կտրվեց, ամպերը քաշվեցան, կարմիր արևը փայլեց քաղաքի անփառունակ փողոցներում: Ես կնոջս հետ շտապեցի դեպի վեր, դեպի հայոց ավերակ թաղը և իմ տան փլատակները:

Որ ասեմ ավերակները լեզու են ունենում խոսելու և խոսացնելու, լալու և լացացնելու՝ չեք հավատալ: Ի՞նչն էր հապա ինձ այդքան խոսացնում, եթե ոչ իմ պարտեզի խանձված ու կիսաքանդ ծառերը, ջարդ ու փշուր վարդենիները, անձրևի կաթիլներից հազար գույն ստացած և բակում ալրի նման մաղված ու կրակից հալված-ձուլված ապակիները, դռների ու լուսամուտների երկաթե վանդակները, երկաթամասերը, մեխերը, թիթեղները, վեմ քարերը, անոթների ու ամանների փշրանքները և այն նկուղն իր քարակույտերով, որի տակ հավատացած էի, թե կգտնեմ իմ պահ տված հարստության արկղը՝ շորեր, արծաթեղեն, ձեռագիրներ... փորեցինք, փորեցինք մարդ ու կին, երկու հոգով և ոչինչ չգտանք: Ոչ մի նշմար, ոչ մի հետք: Լուռ հոգոց միայն արձակեցինք և հետ դարձանք մեր աշխատանքից ձեռնունայն, ցեխի ու քրտինքի մեջ կորած: Աշնանային ցողերից բարձրացած կանաչ խոտի վրա փռեցինք մեր կտավե խուրջինը, հանեցինք մեր պաշար գարի հացն ու սոխը, մի-մի քար դրինք մեր տակը և վերջին անգամ մեր պարտեզում հաց ուտելով՝ վեր կացանք, համբուրեցինք մեր

տան պատերը, մեր դրած քարերը, մեր ձեռք դիպած վայրերը և լուռ ու անխոս, լցված սրտով ու խեղդված կոկորդով հրաժեշտ տվինք նրա անձայն լացող ավերակներին և հեռացանք... Մեր ոտները չէին շարժվում. մեր սիրտը չէր հեռանում... կրկին դարձանք, կրկին համբուրեցինք և այս անդամ ոչ թե հեռացանք, այլ գժվածի պես վազեցինք, որ կարողանանք հաղթած լինել մեր ոտքերի կապանքին, մեր վշտին: Իսկ նրանք գեռ լալիս էին մեր հետևից, դեռ կանչում էին մեզ...

Որքա՜ն ծանր էր այս հրաժեշտը:

Անցանք... Ավերակնե՛ր, ավերակնե՛ր, սարսափ ազդող ամայություն, մարդկային գանգեր, մորթազերծ ոսկորտիք և մեր փախո՛ւստը... Բողոքում էին կարծես դրանք մարդկային գազանության զոհ գնացած՝ ո՛վ գիտե քանի՜ մեզ ծանոթ ու բարեկամ, հարազատ ու ազգական անձնավորությունների այդ դիակների ոսկորները, որ չենք մոտենում, չենք խոսացնում, այլ խորշում ենք իբրև մի ժանտախտից և փախչում ենք երեսներս ծածկած, այս կսկծանքը միայն կրկնելով. «Արդյոք մա՞րդն է ավելի մեծ գազան, որ ձեզ այդ օրին հասցրեց, թե՞ աստվածը, վիշապը, բորենին...»:

Հասանք Թուրքաց չեն Թաղը՝ մեր իջևանը գնալու համար: Այդտեղ ևս մի առանձին կենդանություն չկար: Խանութների մեծ մասը փակ, փոքր մասը բաց, բայց դատարկ, չգիտեմ ի՞նչ հույսերով տերերը մեջը նստած, արշինը ձեռքներին խաղացնելիս կամ կշեռն առաջին կախ արած... մեզ դեմ հանդիման եկող մարդկանց մեծ մասը պաշտոնյաներ էին, Թուրք պաշտոնյաներ՝ երեկվա հոգով ու մարմնով մեզ ծանոթ մոլի Թուրքը, այսօր կարմիր ժապավեն կպցրած և շատերը կոմունիստ դարձած, ո՛չ մի գաղափար չունենալով կոմունիզմի մասին:

Անցանք ռևկոմների շարքը: Քանի՞ հատ էին նրանք, քանի՞ բաժանմունք, քանի՞ վարչություն, քանի՞ տեսակ: Թիվ ու համար չկար: Մտանք գործով, դիմումներով, ելանք ձեռնունայն, խոստումներով... մեր դիմումների նպատակն էր, որ Թույլ տային մեր տան՝ ավերակներում, պատերի ծայրերին մնացած Թիթեղներից մի 50 հատ գյուղը տանելու, այնտեղի մեր կացարան ավերակ սենյակներից մեկի գլուխը ծածկելու և մեջը պատսպարվելու: Մեկը խոստացավ... մյուսը Թե՝ քաղաքը պիտի վերաշինենք... երրորդը՝ չէ՛, ասաց, պատերազմական ավար է, Թույլ չենք տա տանելու...

Եվ այդպես ձեռնունա՛յն...

Մեր Թափառումների յուրաքանչյուր քայլափոխում մեզ հանդիպում էին այդտեղ հայ աղջիկներ և հայուհիներ՝ մեծ մասը ժառանգություն մնացած Թուրքերին քաղաքի կործանումից ու հայերի գերությունից: Մենք լսել էինք, բայց չէինք տեսել նրանց Թուրքի կին դարձած: Որն իր հագուստում, որը Թուրքական չադրայի մեջ, աչք-ունքը խինայած... Մեր հարևանի աղջկան պատահեցինք մի դռան ճեղքով դեպի փողոց նայելիս: Կինս մոտեցավ, կանչեց անունը: Նա կնոջս բարևն ընդունեց սառնասրտությամբ և հուզմունքն արհամարհեց սառնությամբ ու դրական պատասխաններից հրաժարվեց:

— Շա՞տ կան ձեզանից այստեղ,— հարցրեց կինս:

— Շա՜տ...

— Ովքե՞ր են, ասա, մեր Թաղից մնացածները:

— Չեմ կարող... չեմ տեսել. վերքերս մի՛ քրքրեք, կոտորվեն ձեզ պես հայերը,— ասաց նա թախծությամբ և դուռը երեսներիս պինդ շրխկացրեց:

Մենք շտապով հեռացանք այդտեղից իբրև հանցավորներ, որ համարձակվել էինք նրան խոսացնելու և վախենալով փորձանքի մեջ ընկնելուց, բայց որքա՜ն դառնություն տարանք մեզ հետ նրա բողոքավոր, թունոտ խոսքերից...

Երկար չմնացինք այդտեղ և շուտով թոթափեցինք մեր ոտների փոշին ու շտապեցինք դեպի Դովթալաբի ձորը: Մեր ետևից դեռ լալիս էին ավերակները...

Մենք անցանք Ղայբալին, Կարկաժանը, Փահլուլը, Խանքենդին, Ջամիշլուն, Խնածախը, Բալլուջան, Միհտիշենը, մի ուղղություն, մի գծի վրա բոլո՜ր ավերակ, բոլորը նզովք շպրտելով կարծես մեր երեսին ու մեզ համարելով ավերածության հանցավորը: Բայց չինականի ձայն էր լսվում այդ ավերակների միջից: Եկել էին տերերը կիսաքանդ պատերի տակ ծղնոտե ծածկոցներ ու կարպետի վրաններ շինել՝ մեջը պատսպարվելու համար, իսկ շատերը բացօթյա: Մթանը մենք հասանք Խնածախ, գիշերեցինք դուրսը՝ դռան երկու ընկած փեղկերի վրա, մեր հագուստով, անձրևի տակ...

— Հապա ի՞նչ կանեք ձմեռը, այս դրությամբ հո՛ ապրել անհնար է,— հարցրի ես հետևյալ առավոտ մեզ հյուրընկալող տանտիրոջը:

— Մի կերպ յոլա կդնանք. դոմից, սրահից-բանից կծածկենք, տակը մտնենք, մինչև գարուն կլուսանա և կամաց-կամաց կսկսենք շինել մեր տները...

Ես կարծում էի, թե սրանք անտուն-անօթևան մնալով՝ կգաղթեին կամ չեն գյուղերը, կամ ուրիշ երկիր, բայց, որքա՜ն տոկուն էր նրանց միտքը, որքա՜ն հաստատուն կամքի տեր էին հայրենիքից անբաժան մնալու: Բավական է, ասում էին, որքան տարագիր եղանք, որքան արհավիրքները հալածական արին մեզ մեր օջախից, մեր վաթանից...

— Իսկ քանի՞ գյուղեր են ավերված,— հարցրի ես իմ խոսակցին:

— Ամբողջ Լեռնային Ղարաբաղում 44 հայկական գյուղ...

Մի նոր ալեկոծում առաջացավ իմ ներսն այդ թիվը լսելուց և այդ ալեկոծ մտքերով մենք հեռացանք ավերակներից ու մտանք շեն Խաչենի խորքը...

(1920, օգոստոս)